ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

24 մարտի 2012թ. թիվ 110

ԳԱԳԻԿ ԱԹԱԲԵԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետի «ա» ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության պետական տեսչության պետի 2011 թվականի դեկտեմբերի 5-ի N 76-Ա կարգադրության համաձայն ս/թ դեկտեմբերի 7-ից 26-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունում իրականացված ուսումնասիրության հիման վրա կազմված տեղեկանքը և Գ.Աթաբեկյանի բացատրությունը՝

Կ ա ր գ ա դ ր ու մ ե մ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010թ. օգոստոսի 2-ի N 1262-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգի» 3-րդ կետի պահանջը խախտելու պատճառով «ՀՀ Լոռու մարզի Չկալովի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Գագիկ Աթաբեկյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2012թ. մարտի 24
ք.Վանաձոր